

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ	15
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	19
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպերը վերջին ամիսներին դանդաղել են տարեսկզբի բարձր աճերի համեմատ, սակայն սեպտեմբերին նկատվել է աճի տեմպի արագացում՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների և արդյունաբերության աճերի արագացմամբ: Այսպես, սեպտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 7.0%, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսների ՏԱՑ-ը շարունակել է դանդաղել՝ կազմելով 8.7%՝ հունվար-օգոստոսի համեմատ ցածր լինելով 0.3 տոկոսային կետով: Հաշվի առնելով նախորդ տարվա վերջին ամիսներին տնտեսական ակտիվության աճի արագացումները՝ պայմանավորված ոսկերչական գործունեության աճով (որը ընթացիկ տարում զգալիորեն նվազել է), կարող ենք սպասել, որ այս տարվա վերջում ՏԱՑ-ը էականորեն կդանդաղի:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹




2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 8.3 և 2.7 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.4 և 0.8 տոկոսային կետով: Սեպտեմբերի ՏԱՑ-ի արագացումը (նախորդ ամսվա 5.6%-ից 7.0%) պայմանավորված է եղել արդյունաբերության և ծառայությունների աճերի տեմպի արագացմամբ:

Տնտեսական ակտիվության աճին դրական նպաստում է ունեցել նաև գյուղատնտեսության ոլորտի 1.8% աճը, որը ՏԱՑ-ը արագացրել է 0.1 տոկոսային կետով: Նշենք, որ գյուղատնտեսության ոլորտը վերջին

¹ Նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են:


տարիներին շարունակական անկումներ է ունենում, որոնց համեմատ 1.8% աճը բավական ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով նաև ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսության զարգացմանն ուղղված միջոցառումների խոշոր ծավալները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-սեպտեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպը փոքր-ինչ արագացել է սեպտեմբերին: Վերջին ամիսներին արդյունաբերության աճի տեմպը մնում էր բավական ցածր մակարդակում, սակայն սեպտեմբերին այն արագացել է՝ հասնելով 4.6%-ի, օգոստոսի համեմատ արագանալով 2.5 տոկոսային կետով: Հունվար-սեպտեմբեր ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 12.6%՝ հունվար-օգոստոսի

նկատմամբ դանդաղելով 1.1 տոկոսային կետով: Ինչպես նշեցինք SUՑ-ի դեպքում, տարեվերջին արդյունաբերության աճն առավել ցածր կլինի՝ պայմանավորված նախորդ տարվա վերջում մեծ բազայով (ոսկերչական գործունեության աճի հետևանքով ընդհանուր արդյունաբերության աճերի էական արագացմամբ):

Արդյունաբերության հունվար-օգոստոս² ամիսների աճը շարունակել է պայմանավորված լինել հիմնականում մշակող արդյունաբերության աճով, որը, սակայն, աստիճանաբար դանդաղում է: 2024թ. հունվար-օգոստոս ամիսներին մշակող արդյունաբերության աճը կազմել է 20.7% հունվար-հուլիսի 23.6%-ի փոխարեն և ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 13.7%-ով, մինչդեռ հունվար-հուլիսի նպաստումը կազմել էր 15.5 տոկոսային կետ: Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտների աճերը՝ համապատասխանաբար 1.5 և 0.1 տոկոսային կետով:

Հանքարդյունաբերության ոլորտում շարունակվում է գրանցվել անկում: Հունվար-օգոստոսին անկումը կազմել է 8.1%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.6 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճը պայմանավորված է եղել «հիմնային մետաղների արտադրություն» գործունեության շուրջ 3.4 անգամ աճով (հիմնականում ոսկու վերաարտահանմամբ պայմանավորված), որի նպաստումը մշակող արդյունաբերությանը կազմել է 21.2 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության աճին դրական նպաստում ունեցող ենթաճյուղերից կարելի է առանձնացնել նաև «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն», «էլեկտրական սարքավորանքի արտադրություն», «կահույքի արտադրություն» և «սննդամթերքի արտադրություն» ենթաճյուղերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերությանը կազմել են ընդամենը 2.1 տոկոսային կետ:


Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթաոլորտներ շարունակում են անկում ապրել: Մասնավորապես, էական են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն», «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն» և «խմիչքի արտադրություն» ենթաճյուղերի բացասական նպաստումները, որոնք միասին կազմել են 2.0 տոկոսային կետ:

² Արդյունաբերության սեպտեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

Ընդհանուր առմամբ, առանց «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի, արդյունաբերության ոլորտը հունվար-օգոստոսին անկում է ապրել 0.3%-ով:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է, սակայն դեռևս մնում է բարձր մակարդակում: 2024թ. սեպտեմբերին շինարարության աճը կազմել է 14.7%՝ օգոստոսի համեմատ դանդաղելով 1.8 տոկոսային կետով, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսների աճը՝ 15.9%՝ դանդաղելով 0.3 տոկոսային կետով: Շինարարության աճը հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպն աստիճանաբար արագանում է: 2024թ. սեպտեմբերին ծառայությունների ոլորտի աճը կազմել է 11.6%՝ շուրջ 2.1 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ ամսվա ցուցանիշից: Արդյունքում ծառայությունների աճը հունվար-սեպտեմբերին նույնպես արագացել է՝ 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 5.9%:

Ըստ հունվար-օգոստոս³ ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը հիմնականում պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտով, որի աճը կազմել է 21.1%, իսկ նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին՝ 5.6 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից և տեղեկատվության և կապի ոլորտից, որոնք նվազել են համապատասխանաբար 14.4%-ով և 9.5%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.0-ական տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը դանդաղում է: Առևտրի ոլորտում սեպտեմբերին գրանցվել է 13.4% աճ, որը 1.5 տոկոսային կետով ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից և էականորեն ցածր է նախորդ տարվա նույն ամսվա աճից: Քանի որ առևտրի ոլորտում ևս արտացոլված են ոսկերչական գործունեության արդյունքները, ապա հաջորդ ամսվանից կարելի է սպասել առևտրի աճի տեմպերի էական դանդաղում:

³ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁴

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճի տեմպը կտրուկ դանդաղել է: 2024թ. սեպտեմբերին արտահանման աճը կազմել է 38.9%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 26.1 տոկոսային կետով: Հունվար-սեպտեմբեր ամիսների արտահանման ծավալների աճը նույնպես շարունակել է դանդաղել՝ կազմելով 105.1% (շուրջ 2.1 անգամ)՝ հունվար-օգոստոսի 114.1%-ից:

2024թ. հունվար-օգոստոս⁵ ամիսներին արտահանման աճը շարունակել է գրեթե ամբողջությամբ պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանմամբ, որն աճել է շուրջ 7.0 անգամ՝ արտահանման աճին նպաստելով 122.7 տոկոսային կետով:

Արտահանման կառուցվածքում աճեր են գրանցվել նաև «հանքահումքային արտադրանք», «բուսական ծագման արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերի գծով, որոնց ընդհանուր նպաստումն արտահանման աճին եղել է բավական փոքր՝ 3.1 տոկոսային կետ: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով գրանցվել է կա՛մ զրոյական աճ, կա՛մ անկում:


Առանց վերը նշված «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու

⁴ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁵ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

վերաարտահանման) ընդհանուր արտահանման անկումը հունվար-օգոստոսին կազմում է 9.5%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է: Ներմուծման աճի տեմպը 2024թ. սեպտեմբերին կազմել է 11.9%՝ էականորեն ցածր լինելով ինչպես տարեսկզբի, այնպես էլ նախորդ ամսվա ցուցանիշներից: Սա կապված է մի կողմից՝ ոսկերչական ապրանքների վերաարտահանման ծավալների նվազման, մյուս կողմից՝ այլ ապրանքախմբերի գծով ներմուծման նվազման կամ ցածր աճերի հետ՝ կապված ներքին պահանջարկի դանդաղ աճերով:

2024թ. հունվար-օգոստոս ամիսների⁶ տվյալներով, ներմուծման աճը՝ արտահանման նման, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 7.0 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 67.3 տոկոսային կետով:

Ներմուծմանն էական բացասական նպաստում է ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի գծով ներմուծման 54.2% անկումը՝ ներմուծման աճին հակազդելով 9.6 տոկոսային կետով:


Առանց «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստումը հաշվի առնելու, ներմուծման ծավալները հունվար-օգոստոսին նվազել են 8.0 տոկոսային կետով:

⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷

Աշխատավարձի աճի տեմպը մնում է ցածր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.6%-ով (հունվար-հուլիսի համեմատ դանդաղել է ևս 0.1 տոկոսային կետով)⁷ կազմելով 280,382 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.4%-ով (հունվար-հուլիսի համեմատ մնացել է նույն մակարդակում)⁷ կազմելով 305,563 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմել է 217,237 դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.1%-ով:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-օգոստոսին, %



⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



ՀՀ դրամի փոխարժեքը շարունակում է մնալ բավական կայուն: Դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ մայիս-սեպտեմբեր ամիսներին մնացել է կայուն՝ միջինում 387-388 դրամի մակարդակում: Այդ պայմաններում, ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ արժեզրկված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ՝ համապատասխանաբար 1.2%-ով և 1.5%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը նույնպես տարվա ընթացքում եղել է կայուն՝ մեկ ռուբլու դիմաց միջինում 4.4 դրամ մակարդակում: Սեպտեմբերին ռուբլու նկատմամբ

ՀՀ դրամի փոխարժեքը փոքր-ինչ նվազել է՝ հասնելով 4.2 դրամի, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ դրամը ռուբլու նկատմամբ եղել է արժևորված շուրջ 9.0 տոկոսային կետով (որի տեմպը, սակայն, աստիճանաբար դանդաղում է):


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁸

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 1,860.4 մլրդ դրամ՝ աճելով 6.6%-ով, որը հունվար-օգոստոսի համեմատ բարձր է 1.1 տոկոսային կետով: Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-սեպտեմբերին կազմել է 6.8%՝ հունվար-օգոստոսի նկատմամբ արագանալով 0.8 տոկոսային կետով: Ոչ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 6.4%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները աճել են շուրջ 2.2 անգամ (7.2 մլրդ դրամով):

Հարկ է նշել, որ հարկային եկամուտների 9 ամսվա պլանը կազմում է 1,915.8 մլրդ դրամ, մինչդեռ փաստացի հավաքագրվել է 1,767.2 մլրդ դրամ՝ շուրջ 148.6 մլրդ դրամով կամ 7.8%-ով պակաս:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-սեպտեմբերին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 10.0%), բնապահպանական և

⁸ ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տվյալների հիման վրա: Ընդ որում, սկսած 2024թ. հունիսից, 2023-ի և նախորդ տարիների ցուցանիշները հրապարակվում են հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները ընդհանուր ցուցանիշներում ներառված, ինչի հետևանքով սույն տեղեկանքում պետական բյուջեի ցուցանիշների աճերը տարբերվում են նախորդ ամիսներին հրապարակված տեղեկանքների ցուցանիշներից:

բնօգտագործման վճարների (աճը՝ 79.4%) և շահութահարկի (աճը՝ 5.0%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.7, 2.0 և 0.8 տոկոսային կետ:


ԱԱՀ-ի գծով մուտքերը հունվար-սեպտեմբեր ամիսներին նվազել են 2.3%-ով՝ ընդհանուր հարկային եկամուտներին հակազդելով 0.8 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ներմուծման (ոսկու վերաարտահանմամբ ճշգրտված) նվազմամբ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-սեպտեմբեր		2024թ. հունվար-սեպտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	15.6	15.6	6.8	6.8
Ավելացված արժեքի հարկ	15.0	4.9	-2.3	-0.8
Ակցիզային հարկ	12.4	0.7	0.2	0.0
Շահութահարկ	43.6	5.9	5.0	0.8
Պետական տուրք	-47.9	-3.0	20.9	0.6
Մաքսատուրք	58.8	1.4	1.4	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-41.2	-2.1	79.4	2.0
Այլ հարկեր	35.5	1.0	12.2	0.4
Շրջանառության հարկ	29.8	0.6	17.0	0.4
Եկամտային հարկ	18.1	4.7	10.0	2.7
Սոցիալական վճարումներ	43.3	1.4	15.0	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը շարունակում է մնալ եկամուտների համեմատ էականորեն բարձր մակարդակում: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 1,933.4 մլրդ դրամ՝ աճելով 15.7%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը նվազել է 0.7 տոկոսային կետով): Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 14.0%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 12.1 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների աճի տեմպը դանդաղել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 25.9% և ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 3.6 տոկոսային կետով:

Պետական բյուջեի ծախսերը տարվա առաջին ինն ամիսների տվյալներով պլանի համեմատ թերակատարվել են 224.7 մլրդ դրամով կամ 10.4%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը թերակատարվել են 158.2 մլրդ դրամով կամ 8.8%-ով, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը)՝ 66.4 մլրդ դրամով կամ 18.0%-ով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Բյուջեի ծախսերը շարունակում են էականորեն բարձր մնալ եկամուտներից, պետական բյուջեն պակասուրդային է եղել: 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեի ծախսերը գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում ձևավորվել է շուրջ 73.0 մլրդ դրամի չափով պակասուրդ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեն հավելուրդային էր և կազմում էր շուրջ 74.6 մլրդ դրամ:

Այնուամենայնիվ, պետական բյուջեի պակասուրդը՝ ըստ պլանի պետք է կազմեր 171.4 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ բյուջեի կատարումը շարունակում է էականորեն շեղված լինել պլանավորվածից:

5.4. Պետական պարտք


2024թ. սեպտեմբերին ՀՀ պետական պարտքի ծավալի աճի տեմպը շարունակել է արագանալ: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 12.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ աճելով 10.4%-ով (նախորդ ամսվա աճը՝ 9.5%): Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում հասել է գրեթե 12.0 մլրդ ԱՄՆ դոլարի՝ աճելով 11.0%-ով (նախորդ ամսվա աճը՝ 10.1%):

Պարտքի աճը տեղի է ունեցել ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 27.1% աճով, մինչդեռ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) շարունակել է նվազել՝ շուրջ 3.5%-ով: Արդյունքում սեպտեմբերի վերջի դրությամբ ներքին պարտքի կշիռն ընդհանուր պարտքի կառուցվածքում աճել է՝ կազմելով 51.8%:

2024թ. սեպտեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա համեմատ նվազել են, սակայն նախորդ ամսվա համեմատ՝ փոքր-ինչ աճել: Դրամավարկային քաղաքականության (ԴՎՔ) տոկոսադրույքների նվազմանը զուգահեռ, սովորաբար նվազում են նաև պետական պարտատոմսերի միջին տոկոսադրույքները (եկամտաբերությունը): Վերջին ամիսներին, սակայն, նկատվում է պարտատոմսերի տոկոսադրույքների որոշակի աճ՝ ԴՎՔ տոկոսադրույքների նվազման պայմաններում:

Կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման միջին տոկոսադրույքը սեպտեմբերին կազմել է 9.1%՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.24 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը կազմել է 9.93%՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.04 տոկոսային կետով: Նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են համապատասխանաբար 1.2 և 0.6 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը նորից դանդաղում է: Չնայած բավական ցածր տեմպին, գնաճն էլ ավելի է դանդաղել՝ սեպտեմբերին հասնելով 0.6%-ի: Սա այն պարագայում, երբ ՀՀ կենտրոնական բանկը շարունակաբար նվազեցնում է ԴՎԲ տոկոսադրույքը (հունվար-սեպտեմբերին ընդհանուր առմամբ 1.75 տոկոսային կետով)՝ արձագանքելով գնաճային միջավայրին և գնաճի սպասումներին:

6.2. Ավանդներ


Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը վերջին ամիսներին որոշակիորեն կայունացել է: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. սեպտեմբերին նախորդ

տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 10.8%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ աճի տեմպը որոշակիորեն արագացել է՝ կազմելով 5.0%՝ նախորդ ամսվա 4.1%-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 12.3% և 5.9%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. սեպտեմբերին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 5.8 տոկոսային կետով: Էական է եղել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով շուրջ 13.4%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 3.0 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը որոշակիորեն արագացել է: 2024թ. սեպտեմբերին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.1%-ով: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալի աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 14.0%:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են շուրջ 23.2%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 21.9 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտների վարկերը նվազել են շուրջ 15.7 տոկոսային կետով՝ ընդհանուր վարկերի աճին հակազդելով 0.8 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ոչ ռեզիդենտների դրամային վարկերի նվազմամբ:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ իրավաբանական անձանց, և՛ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 23.7% և 22.6%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 11.9 և 11.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁹




Սեպտեմբերին վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել հիպոթեքային (աճը՝ 27.6%) և սպառողական (աճը՝ 18.4%) վարկերի աճերը՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 5.8 և 4.1 տոկոսային կետով: Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալներն աճում են գրեթե բոլոր ճյուղերում՝ բացի ծառայություններից: Ընդ որում՝ դրական է նաև արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալի աճի տեմպը, որը սեպտեմբերին կազմել է 3.9%՝ ընդհանուր վարկերին նպաստելով 0.4 տոկոսային կետով: Արդյունաբերության վարկերի աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտում վարկերի աճով (աճը՝ 39.8%), իսկ մշակող արդյունաբերության վարկերը շարունակել են նվազել: Ծառայությունների ոլորտի վարկերը սեպտեմբերին կտրուկ անկում են գրանցել՝ 32.5%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական և ապահովագրական ոլորտում վարկերի նվազմամբ:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը օգոստոսին կտրուկ նվազել է: 2024թ. օգոստոսին դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է ընդամենը 32.1 մլն ԱՄՆ դոլար՝ շուրջ 131.2 մլն դոլարով նվազելով նախորդ ամսվա համեմատ: Հունվար-օգոստոս ամիսներին զուտ ներհոսքը շուրջ 35.9%-ով ցածր է եղել նախորդ տարվա ցուցանիշից՝ պայմանավորված ինչպես ներհոսքի կրճատմամբ, այնպես էլ արտահոսքի աճով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը հունվար-սեպտեմբերին շարունակել է դանդաղել՝ հունվար-օգոստոսի համեմատ ցածր լինելով 0.3 տոկոսային կետով: Սեպտեմբերին ՏԱՑ-ը փոքր-ինչ արագացել է, սակայն բավական ցածր է մնում տարեսկզբի աճերից, քանի որ բարձր աճ ապահովող գործոններն աստիճանաբար չեզոքանում են: Ավելին, քանի որ ոսկերչական արտադրատեսակների վերաարտահանման գործընթացը սկսվել էր նախորդ տարվա վերջին ամիսներին և մեծացրել այդ ժամանակահատվածի ցուցանիշները՝ ընթացիկ տարվա վերջում բարձր բազայի էֆեկտի հետևանքով կնկատվի աճի տեմպերի էական դանդաղում:

2. Տնտեսության կառուցվածքը վատթարանում է: Ինչպես արդյունաբերության, այնպես էլ արտահանման կառուցվածքում բարձր աճ

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ապահովող գործոնը ոսկերչական արտադրատեսակներն են: Մյուս ենթաճյուղերում գրանցվում են բավական ցածր աճեր կամ անկումներ, ինչը բնականաբար բացասական երևույթ է և կարող է տնտեսությունում առաջացնել երկարաժամկետ խնդիրներ: Առանց ոսկերչական գործունեության («թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի) ընդհանուր արտահանման անկումը կազմել է 9.5%, իսկ արդյունաբերության անկումը՝ 0.3%:

3. Գնաճը շարունակում է դանդաղել՝ չնայած դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի էական նվազմանը: Ընթացիկ տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ն շուրջ 1.75 տոկոսային կետով նվազեցրել է ԴՎՔ տոկոսադրույքը, սակայն նույն ժամանակահատվածում գնաճը մնացել է բավական ցածր մակարդակում, իսկ նախորդ երկու ամիսների ընթացքում շարունակել է դանդաղել: Միևնույն ժամանակ, վերջին ամիսներին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները փոքր-ինչ աճել են՝ որոշակիորեն շեղվելով սովորաբար նկատվող ԴՎՔ տոկոսադրույքի հետ նույն ուղղությամբ շարժի միտումից:

4. Պետական բյուջեի ցուցանիշներն էականորեն թերակատարվել են: 2024թ. հունվար-սեպտեմբերին պետական բյուջեի պլանի համեմատ հարկային եկամուտները թերակատարվել են 148.6, իսկ ծախսերը 224.7 մլրդ դրամով: Ընդ որում, շուրջ 66.4 մլրդ դրամով (շուրջ 18.0%-ով) թերակատարվել են կապիտալ ծախսերը՝ արտացոլելով կապիտալ ծախսերի իրականացման գծով առկա չլուծված խնդիրները:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: